



ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՈՆԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ Ս. Է. ՋՄԻԸՆԻ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

«Քանզի Հայր մեր գտորք Աւետարանն գիտեմք
եւ Մայր՝ զԱռաքելական Եկեղեցի Կաթողիկէ»:
(ԵՂԻՑԵ)

«Արքոց Վարդանանց զօրավարացն մերոց՝ 1036 վկայիցն, որք կատարեցան ի մեծի պատերազմին», այսպես է ավանդում մեզ այդ հիշատակը եկեղեցական տոմարացույցը, և «Վարդանանք» նվիրական անվան ներքո են ճանաչվում 451 թվականին Տղմուտ գետի ափին վասն Հիսուսի և վասն հայրենյաց հերոսամարտի դուրս եկած 1036 քաջերը, ավարայրյան հավատամարտի այն հերոսները, ովքեր ոչ թե որպես զգեստ էին կրում քրիստոնեությունը, այլ որպես «գոյն մորթոյ»։ Նրանք ելան ընդդեմ թշնամու՝ համոզված, որ «Մահ իմացեալ անմահութիւն է»։ Եվ նրանք, ովքեր արյամբ արժանացան նահատակության անթառամ պսակին, հավիտենապես դրոշմվեցին Հայոց պատմության ամենավառ էջում, դասվեցին սրբերի շարքը։ Հայոց Առաքելական Սուրբ Եկեղեցին ամեն տարի իրավամբ փետրվարի կեսին, իր կամարների տակ, ի մի է բերում հավատացյալ հայրորդիների՝ տոնախմբելու Վարդանանց տոնը։

Փետրվարի 15-ին մարդաշատ էր նաև Մայրավանքը։ Հավաքվածները եկել էին մասնակցելու Վարդանանց 1036 նահատակների հիշատակին մատուցվող սուրբ և անմահ պատարագին։ Օրվա պատարագիչն էր հոգեշնորհ Տ. Հայկազուն ծայրագույն վարդապետ Նաջարյանը։ Իր քարոզում մեկ անգամ ևս հիշեցնելով ներկաներին այն անժխտելի ճշմարտությունը, թե Վարդանանց խորհուրդը սերունդների հոգում դարձավ ամենաճշմարիտ ճանաչումը

հայրենի հողի, մայրենի լեզվի և հիսուսյան հավատքի, նա նաև ավելացրեց, որ Վարդանանց սերնդի կյանքը եղավ ինքնամատույց պատարագ, ընծայված Աստուծո սուրբ սեղանին, որով Ավարայրի դաշտը վերածվեց կարմիր խորանի:

Վարդանանց անմահ հիշատակին նվիրված հարուստ և ուսանելի միջոցառումը, որ տեղի ունեցավ ճեմարանի հանդիսությունների դահլիճում, Մայր Աթոռի դիվանապետ գերաշնորհ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պողապայանի բարձր նախագահությամբ, ասես Հայր Սուրբի քարոզի տրամաբանական շարունակությունն էր:

Հանդիսությունը բացվեց «Տերունական աղոթք»-ով: Հնչեցին Հայաստանի Հանրապետության պետական և հոգևոր ճեմարանի օրհներգերը, որից հետո բացման խոսք ասաց ճեմարանի տեսուչ հոգեշնորհ Տ. Հայկազուն ծայրագույն վարդապետ Նաջարյանը:

Այնուհետև հարուստ ծրագրով հանդես եկան ճեմարանի սաները: Հնչեցին Ներսես Ծնորհալու «Նորահրաշ պսակավոր», Մակար Եկմայանի «Լոեց», «Պլպույն Ավարայրի», «Երգ մեռնող հայրենասերի», Կոմիտասի «Ո՛վ հայկազունք» տաղերը, հայ նշանավոր բանաստեղծների՝ Վարդանանց նվիրված ստեղծագործությունները:

Բանախոսությամբ հանդես եկավ դոցենտ Ավետիս Հարությունյանը:

Հանդիսության վերջում օրհնության խոսք ասաց գերաշնորհ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պողապայանը:

Ավարտվեց հանդիսությունը: Մեկ անգամ ևս արժևորվեց Սրբոց Վարդանանց նահատակության մեծ խորհուրդը, քանզի ոչ մի հայորդի երբեք չի կարող ապրել առանց Վարդանանց ազատամարտի տեսիլքի: Այսօր էլ նրանցից ամեն մեկը մի-մի նորահրաշ պսակավոր է՝ երբ կանգնած է Արցախյան հերոսամարտի դիրքերում, որովհետև իրենց վարդագույն արյամբ են մարտնչում «արիաբար ընդդեմ մահու»՝ արձանագրելով, թե «Մահ ոչ իմացեալ մահ է, մահ իմացեալ անմահութիւն»:

